Որոշման Նախագիծ

Լսելով և քննարկելով ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն Վլադիմիր Հարությունյանի ելույթը 2021թ. կատարված գիտակազմակերպչական աշխատանքների մասին, ժողովն արձանագրում է, որ.

1) ինստիտուտը բազային գիտահետազոտական թեմաները ավարտին է հասցրել ժամկետից շուտ՝ ոչ թե 12 ամսում, այլ 10 ամսում, որը խոսում է այն մասին, որ ինստիտուտն ունի գիտական լուրջ պոտենցիալ։

2) Ինստիտուտը հաշվետու տարում հրապարակել է գիտական հոդվածների երկու բացառիկ ժողովածու և կիրառական առաջարկությունների 3 գիրք, ընդհանուր առմամբ 15 գիրք և հարյուրավոր գիտական հոդվածներ։

3) Հաշվետու տարում ինստիտուտի գիտակազմակերպչական գործունեությունն աչքի է ընկել մի շարք առանձնահատկություններով։

4) Հաշվետու տարում ինստիտուտի կողմից գիտության կոմիտե ներկայացված 2 թեմա հաղթել են հանրապետական մրցույթում։

5) Ինստիտուտի կողմից ամենամյա հրապարակվող «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» խորագրով գիտական հոդվածների ժողովածուն ներկայացված է.

- ԲՈԿ՝ այն իրենց ցանկում ընդգրկելու ակնկալությամբ,
- Սկոպուսին՝ այն իրենց ցանկում ընդգրկելու ակնկալությամբ ։

Վերոնշյալներից ելնելով ժողովը

ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է

1) Ինստիտուտի 2021թ. գիտակազմակերպչական գործունեությունը գնահատել բարձր։
2) Հանձնարարել ինստիտուտի տնօրինությանը և բաժինների վարիչներին առավել արդյունավետ դարձնել ինստիտուտի գիտակազմակերպչական գործունեությունը։

Ժողովի նախագահ՝ Յուրի Սուվարյան

Ժողովի քարտուղար՝ Լիլիթ Սարգսյան